




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ**

«14» նոյեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-83/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.10.2016թ. թիվ 03/73-1/24582-16 գրությամբ ներկայացված «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00401542) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 12.04.2016թ. թիվ 1/73-1/11932-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.04.2016թ. թիվ 01/61-6218 գրության պատճենը:

Կենտրոնը 30.09.2016թ. թիվ 01/04.1/3601-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11932-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել, ուստի ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11932-16 գրությամբ ներկայացված «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.10.2016թ. թիվ 03/73-1/24582-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի 13.10.2016թ. թիվ 03/61-71283h գրությամբ ներկայացված հիմնավորմամբ հետ են վերադարձնում Կենտրոնի 30.09.2016թ. թիվ 01/04.1/3601-16 գրությունը և հայտնում են, որ անհրաժեշտ է գրության մեջ նշված գնման գործընթացի մասով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի 13.10.2016թ. թիվ 03/61-71283h գրության պատճենը:

2. «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ուսումնասիրելու վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.08.2016թ. ժամը 15:00-ին կազմակերպված

քննարկման ժամանակ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի տնօրենը պարզաբանել է, որ ընկերությունը էլեկտրոնային փոստով պատվիրատուին 30.03.2016թ. ուղարկել է հավելված 1-ի ճշտված տարբերակը, սակայն հետագայում պարզվել է, որ ընկերությունն իբր խախտում է թույլ տվել՝ չի շտկել նշված հավելվածը:

Ընկերության տնօրենը հայտնել է նաև, որ կներկայացնի շտկված տարբերակը էլեկտրոնային փոստով պատվիրատուին ուղարկելու վերաբերյալ համապատասխան ապացույց և խնդրել է ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ իրենց ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/60» ծածկագրով բաց ընթացակարգին և ճանաչվել է հաղթող: 29.03.2016թ. էլեկտրոնային փոստին պատվիրատուի կողմից նամակ են ստացել այն մասին, որ իրենց հայտում սխալ է հայտնաբերվել և պետք է շտկվի՝ հավելված 1-ում պետք է լրացնեն ընդամենը «ՀՀ» տառերը: 30.03.2016թ. նույն էլեկտրոնային փոստին պատվիրատուին են ուղարկել ճշտված տարբերակը, սակայն հետագայում Գնումների աջակցման կենտրոնից անսպասելիորեն տեղեկացել են, որ իրենց ընկերությունը պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այն պատճառով, որ իբր չեն շտկել նշված հավելվածը:

Վերոհիշյալ գրությամբ Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել շտկված տարբերակը էլեկտրոնային փոստով պատվիրատուին ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ (Ընկերության էլեկտրոնային փոստից համապատասխան արտատպումներ) և խնդրել է ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 07.11.2016թ. ժամը 17:30-ին ՍՅ-ԳԲԽ-83/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ էլեկտրոնային փոստով պատվիրատուին ուղարկել են ճշտված տարբերակը, իսկ թե Պատվիրատուն ստացել է այն, թե ոչ, չեն կարող ասել, բացի նշված անհամապատասխանությունը, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում իրենց ընկերությունը, երևում է հենց ընկերության կնիքի վրա և ընդամենը այդ երկու տառերի (ՀՀ)

համար իրենց ընկերությանը մրցույթից դուրս թողնելը, իսկ այժմ էլ այդ հիմքով ընկերությանը ցուցակում ներառելն առավել, քան անհիմն է:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 07.04.2016թ. թիվ 01/61-6218 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/60» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ Ընկերությունը, հանդիսանալով ՀՀ ռեզիդենտ, սույն հայտարարությունը չի ներառել հրավերով սահմանված հավելված 1-ում: Գնահատող հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում Ընկերության կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել՝ ինչի հիմքով էլ գնահատող հանձնաժողովը մերժել է մասնակցի հայտը:

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.10.2016թ. թիվ 03/61-71283h գրությամբ հայտնել է, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին 30.03.2016թ. հայտի հավելված 1-ի շտկված տարբերակը չի ստացվել, ուստի գտնում են, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը համապատասխանում է օրենքի պահանջներին:

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 07.11.2016թ. ժամը 17:30-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՅ-ԳԲԽ-83/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 31.10.2016թ. թիվ 03/73-1/24582-16 գրությամբ ներկայացված «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/60» ծածկագրով ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/60» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) 29.03.2016թ. ժամը 10:00-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին, չի նշել, որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում: Միաժամանակ, Գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և Ընկերությանը տվել է մեկ օր ժամանակ այն շտկելու համար:

3. Գնահատող հանձնաժողովը 02.04.2016թ. ժամը 10:30-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ 29.03.2016թ.-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ Ընկերությանն ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը մասնակցի կողմից չի շտկվել:

Ելնելով վերոգրյալից՝ Գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

4. Ընկերության 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (ava2000.ltd@mail.ru) Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին (gagik.huroyan@yerevan.am) 30.03.2016թ. ուղարկվել է հավելված 1-ի շտկված տարբերակը «havelvac1.pdf» տիպի ֆայլով:

5. ՍՑ-ԳԲԽ-83/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11932-16 և 31.10.2016թ. թիվ 03/73-1/24582-16 գրությունները, Երևանի քաղաքապետարանի 07.04.2016թ. թիվ 01/61-6218 և 13.10.2016թ. թիվ 03/61-71283 հ գրությունները, «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումները, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ **ավելի քան մեկ անգամ խախտել է** պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերության 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (ava2000.ltd@mail.ru) Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին (gagik.huroyan@yerevan.am) 30.03.2016թ. ուղարկվել է հավելված 1-ի շտկված տարբերակը «havelvac1.pdf» տիպի ֆայլով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերությունը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, քանի որ ներկայացված էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերությունը Գնահատող հանձնաժողովի կողմից հայտի հավելված 1-ը շտկելու վերաբերյալ պահանջը կատարել է:

Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետարանի՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.10.2016թ. թիվ 03/61-71283h գրությանը, որով Պատվիրատուն փաստել է, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին հայտի հավելված 1-ի շտկված տարբերակը չի ստացվել, ապա այս կապակցությամբ Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերությունը էլեկտրոնային փոստով Պատվիրատուին ուղարկել է հավելված 1-ի շտկված տարբերակը, ուստի Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից հայտնած համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին հայտի հավելված 1-ի շտկված տարբերակը «չստանալու» փաստը չի կարող հիմք հանդիսանալ արձանագրելու, որ Ընկերությունը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին չի ուղարկել հավելված 1-ի շտկված տարբերակը և չի կատարել Գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան հավելվածը շտկելու վերաբերյալ պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 31.10.2016թ. թիվ 03/73-1/24582-16 գրությամբ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00401542) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բոլորը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահագանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-83/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան